ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՀՐԱՄԱՆ

N 161-Ն

09 հուլիսի 2026թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմանների ն չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՈՒԱԿ-ԷԱՃԱ ՊՁԲ-26/33	10	Վիրաբուժական թել ներծծվող N 1	234000	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ	03584501	ՀՀ Կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115	29.06.2026թ.	«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ/էական որոշեն խախտվել է մատակարարման ժամկետը/	*
	15	Վիրաբուժական թել ներծծվող N 6/0	468000							
	16	Վիրաբուժական թել չներծծվող 5/0	480000							
	19	Վիրաբուժական թել	408000							

		չներծծվող 4/0								
	38	Ներարկման հ-գ լուսապաշտպան շերտով 0,2մկմ ֆիլտրով	450000							

* «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ի միջև 2026թ. փետրվարի 12-ին կնքվել է N ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/33-14 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), ֆինանսական միջոցներ նախատեսվել են 14.04.2026թ. N1 համաձայնագրով: Պայմանագրով ապրանքի առաջին փուլի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված գնորդից ապրանքի/ների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 20 օրացուցային օր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 12.05.2026թ. էլեկտրոնային փոստի միջոցով ապրանքների առաջին փուլի մատակարարման պատվեր է ուղարկել «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ին Պայմանագրի 10-րդ չափաբաժնի մասով՝ 120 հատ, 15-րդ չափաբաժնի մասով՝ 240 հատ, 16-րդ չափաբաժնի մասով՝ 240 հատ, 19-րդ չափաբաժնի մասով՝ 240 հատ, 38 -րդ չափաբաժնի մասով՝ 500 հատ:

Սակայն, Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված վերոնշյալ ապրանքների մատակարարումը մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի՝ 10, 15, 16, 19, 38 չափաբաժինների պահանջված քանակների մասով/ հրաժարվում է «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից, համարելով այն լուծված՝ 2 040 000 (երկու միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման

գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն փվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով ներկայացվել է Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարներից Պատվիրատուի 1570060023050100 հաշվեհամարին փոխանցելու համար, մասնավորապես՝ 204000 (երկու հարյուր չորս հազար) << դրամ՝ որպես պայմանագրի ապահովում և 306000 (երեք հարյուր վեց հազար) << դրամ՝ որպես որակավորման ապահովում:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
Գնումների համակարգող
Հեռ. /010/ 20 50 50 /218/